

3KCM

0-89

24 SEP 2006

11 DEC 2000

15 MAY 2013

300M

5-83

400 ՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ № 17

Պատկերներ բոլոր լեզուներով, միացե՛ք

300

1339-ԾԲ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԼԿՅԵ ՄԻՈՒԹՅԱՆ I ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԽԱՐԱԿ



11843

- I. ՑԻԿԼ. — ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ — 4 ՁՐՈՒՅՑ
II. ՑԻԿԼ. — ԼԵՆԻՆՅԱՆ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ — 5 ՁՐՈՒՅՑ
III. ՑԻԿԼ. — ՌԿԿ 4 ՁՐՈՒՅՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ

ՅԵՐԵՂԱԿ
1924 թ.

**ԿՈՍՅԵՐԻՏԱԿԱՆ (I-ին ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ) ԽՄԲԱԿԻ ԾԲԱ-
ԳՐԻ ԱՌԱՋԱԲԱՆ**

Մեզանում մոտ մի տարի յե արդեն ինչ կիրառվում է քաղ-
զրագիտության միասնական սխեման:

Հայաստանի կազմակերպությունը հենց սկզբից չի կրո-
ուել առաջին կատեգորիայի համար սխեմայից առաջ սահ-
մանված ակումբային ցիկլը: Մեր պարապմունքները տարվել
են խմբակներում:

Վերջին համագումարները յեղնելով անցյալի փորձից, գտան
I-ին կատեգորիայի համար սահմանված «ակումբային ցիկլ»-ի
ձևը աննպատակահարմար և սահմանեցին պարապմունքի մի ըն-
դհանուր և հաստատուն ձև. դա կոմյեխիմական խմբակն է:

Փորձը ցույց տվեց, վոր առաջին կատեգորիայի նախկին
ծրագիրը ունեւր մի շարք անհարմարություններ և թերի կողմեր:
Նա շատ ավելի ծանրաբեռնված էր:

Այս նոր ծրագիրը համապատասխանեցրած է մեր միության
քաղ-դաստիարակչական աշխատանքի կոնկրետ պահանջներին
և ավելի գործնական է:

Նոր ծրագիրը $3\frac{1}{2}$ ամսվա համար է: Ծրագրում ընդամենը
13 զրույց կա: Սակայն ղեկավարը կարող է 2-3 զրույց ևս նվի-
րել պարապմունքները սկսելուն (խմբակի անդամներին ծանո-
թանալուն և այլն) և վերջացնելուն (ծրագիրն անցնելու և աշ-
խատանքի ամփոփումներ անելու համար):

Ծրագիրը շատ հանրամատչելի ձևով է կազմված. բայց և
այնպես մեծ պարտականություններ է ընկնում խմբակավարնե-
րի վրա: Անհրաժեշտ է խմբակի անդամներին ոգնել և ցույց-
մունքներ տալ համապատասխան գրականությունից ոգտվելու
համար:

Խմբակավարը պիտի նկատի ունենա, վոր ծրագրին կցված
հատուկ ձեռնարկ դեռ չկա. այնպես, վոր հարկ է լինում ոգ-
տվել բազմաթիվ գրքույկներից և բրոշյուրներից:

Բացի ծրագրից այս զրքուկում ղեռնդված ե.

1.— Հարցական ձեռնարկ,

2.— Խմբակի հասարակական—քաղաքական աշխատանքի հետ ունեցած կապը,

3.— Խմբակային պարապմունքի մեթոդները,

4.— Կ.Յե.Մ. խմբակի կանոնադրությունը,

5.— Գրական ուղեցույց:

Ազիտ-բաժինս հավատացած ե, վոր տեղերը ղեկավարվելով այս նոր ծրագրով, քաղաքատիրակազմական աշխատանքներն ասպարիզում խոշոր նվաճումներ ձեռք կը բերեն:

ՀԼԿՅԵՄ ԿԵՆՏԿՈՄԻ ԱԳԻՏ-ԲԱԺԻՆ

ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ՍԻՆՄԱՆ

I ՑԻԿԼ.— ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԶՐՈՒՅՑ 1-ին Բանվորը ձեռնարկության ու արդյունաբերության տերն ե: Գործարանի բանվորը յերիտառարդության կյանքն և աշխատանքը տառջ և այժմ: Ինչո՞ւ պետությանն ե թողնված խոշոր արդյունաբերությունը: Այլ հրամանատարական բարձունքների նշանակությունը խորհրդային պետության համար: Վտանգ կա արդյոք, յեթե մանր ձեռնարկությունները կապալով տալու լինենք: Ինչո՞ւ մենք շարժվում ենք միայն դեպի նախապատերազմյան մակարդակը: Աշխատանքի արտադրողականությունը և աշխատավարձը: Ո՞վ ե ղեկավարում մեր արդյունաբերությունը: Բանվորի վերաբերմունքը դեպի արտադրությունը հեղափոխությունից առաջ և այժմ: Ի՞նչ տարբերություն կա խորհրդային և կապիտալիստական գործարանի միջև: Կոմյերիտականի անելիքները արտադրության մեջ:

ԶՐՈՒՅՑ 2-րդ Բանվոր զասակարգի կազմակերպումը: Բանվոր զասակարգը: Ռեկ: Գործարկումը: Արհեստակցական միությունները: Հավաքական պայմանագիր: Գործադուլը խորհրդային պետության սահմաններում: Սոցիալական ապահովագրություն: Բանվորական բժշկականություն: ԼԿՅԵՄ մասնակցությունն այդ կազմակերպություններում և կոմյերիտականների անելիքները: Պրոլետարիատի հասարակական կազմակերպությունները և նրանց տեղը խորհրդային հասարակակարգում:

ԶՐՈՒՅՑ 3-րդ Բանվորը պետության տերն ե: Պրոլետարիատի ղեկառությունը: Ի՞նչ են խորհուրդները: Խորհուրդների ընտրությունները Ընտրողների կատեգորիաները: Ո՞վ չի կարող խորհուրդների ընտրության մասնակցել: Հին իշխանությունը և կապիտալիստները: Բանվորների իրավունքները: Կարմիր բանակ: Աշխատանքի պաշտպանություն: Բնակարանային հարց: Ժողովրդական կրթություն: Պրոլետա-

րական դատարան: Խորհուրդների համագումարները—գերագույն իշխանություն: Խնչպես ե կառավարությունը ղեկավարում խորհուրդները: Խնչո՞ւ պետապարտի մեջ բյուրոկրատիզմ կա: Բանգյուղտեսչության նշանակությունը: Կոմյերիտմիության մասնակցությունը խորհրդային շինարարության ասպարիզում:

ԶՐՈՒՅՑ 4-ԲԴ

Սեֆ և քաղաքի ու գյուղի մերձեցումը: Խնչո՞ւ յեն խորհրդային հանրապետությունները միանում ե Սեֆ միասնական Միության կազմում: Քանի մասերից ե բաղկացած Սեֆ (ՌՍՖՍՀ, ԱՍՖՍՀ, ՌԽՍՀ, ԲՍՍՀ): Խնչպես ե լինու կազմվեց Սեֆ: Սեֆ մեջ իշխանության լինչ կարեվոր որդաններ կան: Սեֆ միջոցով Ռուսաստանի պրոլետարիատը զոգվում ե աղգային հանրապետությունների գյուղացիական մասսայի հետ: Գյուղացիների մասնակցությունը խորհրդային շինարարության մեջ: Խնչո՞ւ Իլյինը հրապարակ նետեց «բանվորների ե գյուղացիների զոգում» լողունը: Գյուղի շերտավորումը ե խորհրդային իշխանությունը: Զոգման տնտեսական բովանդակությունը (հացի արտահանում, մեքենաների ներմուծում, գյուղատնտեսական հարկ, արտաքին առևտրի մենաշնորհ): Խնչու գյուղացու համար ավելի ձեռնուռ յե բանվոր դասակարգի հետ առաջ ընթանալ: Կոմյերիտմիության զերը գյուղի հետ զոգումն ամրապնդելու զործում: Շեֆության գաղափարը ե նրա հետեվանքները:

II ՑԻԿԼ.—ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆ

ԶՐՈՒՅՑ 1-ԻՆ

Կանոնադրությունը: Մեր Միության սկզբնական ձևը բջիջն ե: Ո՞վ ե մտնում մեր Միության շարքերը: Յերիտասարդության վեր մասն ե կազմում մեր Միության հիմնական կորիզը: Արդոք բոլորին միատեսակ են ընդունում Միության մեջ ե ինչո՞ւ: Անդամի ե թեկնածուի մեջիվ յեղած տարբերությունը: Միության մեջ ընդունելը ե ընդունելության պայմանները: Անդամի իրավունքներն ու պարտականությունները: Դիսցիպլինան Միության մեջ: Ընտրողականությունը Միության մեջ: (Ստորադրություն ներքեվից ե վերեվից): Միութենական բջիջի կապը կուսակցական բջիջի հետ: Խնչպես են միանում բջիջները: Կոմյերիտմիություն լինչ ե հանդիսանում բանվոր ու գյուղացի յերիտասարդության համար: Կոմյերիտմիությունն ու պատկոմները:

ԶՐՈՒՅՑ 2-ԲԴ

Միության Քանի ժամ ե աշխատում անշափահասը ձեռնարկության մեջ (առաջ ե հիմա): Անշափահասը ե ժամ աշխատանք ե կապիտալիստական պետության մեջ: Միության հիմնական անելիքն ե՞ պաշտպանել բանվոր յերիտասարդությանը, քաղաքական աշխատանք տանել, կուսակցությանը հուսալի փոխարինողների կազմ պատրաստել: Բրոնյան ե նրա նշանակությունը: Գործարանային ե գյուղացիական յերիտասարդության զպրոցներ: Կոմյերիտմիության զերը նրանց շինարարության մեջ: Խնչո՞ւ զործունեությունը—կոմյերիտականի աշխատանքի հիմքն ե միության մեջ: Քաղկրթության միության մեջ: Կոմյերիտմիությունը—կուսակցության պահեստի ումն ե: Կուսակցության ե կոմյերիտմիության փոխարարերությունները:

ԶՐՈՒՅՑ 3-ԲԴ

ՌԼԿՅԵՄ պատմությունը (հիմնական մոմենտներ): Յերիտասարդության կազմակերպումը: III-րդ Խնտերնացիոնալ—1917 թվին: Յերիտասարդության 1 ին համագումարը—1918 թվին, վոր միությունը ՌԿՅԵՄ անվանեց: ՌԿՅԵՄ քաղաքացիական պատերազմի մեջ: Կոմյերիտմիությունը Կարմիր բանակի նեցուկն ե: ՌԿՅԵՄ 3-րդ համագումարը, Լենինի ձառը համագումարում: Միության աշխատանքը նեպի ժամանակ: Ճգնաժամ Միության մեջ, թեքում: Գյուղացի յերիտասարդության մասսայական հեռացումը Միությունից: Վերելքի շրջանը Միության մեջ: ՌԿՅԵՄ 5-րդ համագումարը՝ 1922 թվին: Կոմունիստական դաստիարակության խնդիրները Միության մեջ: Կարմիր նավատորմի շեֆության ընդունումը: Գործարանային զպրոցի (фабзавуч) ե բրոնյայի հարցերը Միության աշխատանքների մեջ: Կոմյերիտմիության մասնակցությունը զպրոցական շինարարության մեջ: Կուսակցական զիսկուսիան ե Միությունը: Դիսկուսիա Միության մեջ: Լենինյան կոչը Միության մեջ: 5-րդ համագումարը ե ՌԿՅԵՄ վերանվանվումը Լենինյան Կոմյերիտմիություն:

ԶՐՈՒՅՑ 4-ԲԴ

Տեղական կազմակերպության պատմությունը: Յերիտասարդության խմբակներն Անդրկովկասում մինչև 1917 թվին: 1917 թվի Սպարտակ կազմակերպությունը Թիֆլիսում: Միության կազմակերպությունը Բազմում: Միության առաջին անդրկովկասյան կոնֆե-

4 նոյեմբեր 1919 թվին: Գաղտնի աշխատանք, լիզալ աշխատանքի շրջան: Սիւլթյան աշխատանքը Խորհրդային իշխանության պայմաններում: 1921 թվի վերջի և 1922 թվի սկզբի ճգնաժամը: Միությունն սճման ճանապարհին: Հակակոմունիստական կազմակերպությունների քայքայումը: Համագումարներ և կոնֆերանցիաներ (հատկապես մանրամասն կերպով լուսաբանվում և տեղական նյութը): Պատանեկական կոմունիստական խմբակների կազմակերպումը և ծաղկումը:

ԶՐՈՒՅՑ 5. ԲԴ. Լենինի՝ յերիտասարդությանը թողած ավանդները: Կոմունիստի դաստիարակումը: Հոմյերիտմության հիմնական անելիքը: Կոմյերիտականը միշտ գործունյա յի: Ոգնում և Խորհրդային իշխանությանը: Աշխատում և անպրագիտության վերացման ասպարիզում: «Գիտություն և պայքար»: «Յերիտասարդությունը պետք և սովորի, թե ինչպես կառուցել սոցիալիստական տնտեսությունը»: Միայն գրքերի ընթերցումով կոմյերիտականից կոմունիստ պատրաստել չի կարելի: Տեսականի և գործնականի գույքակցում, Պետք և սպանել սեփականության վողին: Գաստիարակության հիմքը պայքարն և: Կոմունիստական բարոյականությունը պրոլետարիատի բարոյականությունն և: Լենինը և միջադպյին յերիտասարդական շարժումը:

III ՑԻԿԼ. — ՌԿԿ ՅԵՎ ԿՈՄՄՆՏԵՐՆ

ԶՐՈՒՅՑ 1-ԻՆ. Կուսակցություն: Կուսակցական միասնականություն: Կուսակցական բջիջ: Կուսակցական բջիջի անելիքները գործարանում, ձեռնարկության մեջ (նկարագրել): Բանվորների և վոչ-պրոլետարական տարրերի ընդունելությունը կուսակցության մեջ: Պրոլետարական կորիզի նշանակությունը կուսակցության մեջ: Մանր-լուրժուական աղղեցություն: Պայքարը նրա դեմ: Ինչո՞ւ Լենինն ամբապնդում ևր կուսակցության միասնականությունը: Նեպոական մշուշապատումը և վ.Հ.: Ինչո՞ւ համար և կուսակցությունը: Մեր կուսակցությունը—բանվոր դասակարգի կուսակցություն և: Ինչի՞ յեն ձգտում կոմունիստները: «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք» լուսնոգի նշանակությունը:

ԶՐՈՒՅՑ 2. ԲԴ. Հիմնական մոմենտներ ՌԿԿ պատմությունից: Բանվորական շարժումը Ռուսաս-

տանում 19-րդ դարի վերջին: Բանվորական շարժման չձևակերպված լինելը: Սոցիալ-դեմոկրատական խմբակների կազմակերպում: Առանձին խմբակներից դեպի Ռ.Ս.Դ.Բ.Կ.: Պառակտում մենշևիկներին հետ: Բուլշևիկներն ու մենշևիկները և նրանց դերը 1905 թվին: Ո՞վքեր են լիկվիդատորները: Բուլշևիկներն դւ մենշևիկներն Անդրկովկասում 1917 թվին և բուլշևիկներն ու մենշևիկներն իտաղացած դերը: Ինչո՞ւ կոմյերիտմությունը պետք և մարտական Լենինիդմի դպրոց լինի:

ԶՐՈՒՅՑ 3-ԲԴ. Լենինի կենսագրությունը: Լենինի կենսագրությունը—կուսակցության պատմությունն և: Ալեքսանդր Ուլյանովի (Լենինի յեղորը) մահապատիվը և այդ գործողության թողած աղղեցությունը Վլադիմիր Իլյիչի վրա: «Մենք այդ ճանապարհով չենք ընթանա»: Լենինի մասնակցությունը խմբակներում: Լենինը բանվորական մասսայի ամենախիտ շարքերում: Պրտերում: Լենին և աքսոր: Լենինը և «Իսկրա»-ն: Կուսակցության 2-րդ համագումարը: Լենինը 1905 թվին ընդդեմ ազատական (լիբերալ) բուրժուազիայի և գյուղացիության հետ կապ հաստատելու կողմնակից: Լենինը ռեակցիայի տարիներում պահպանում և կուսակցության միասնականությունը: Պրագայի կոնֆերանցիան: 1912 թվի Լենայի անցքերը: Լենին իմպերիալիստական պատերազմի տարիներին: Ցիմմերվայր: Կինտալ: Լենինը և փետրվարյան հեղափոխությունը: Արտասահմանից վերադառնալը: Ապրիլյան թեզիսները: Հուլիսյան որերը: Լենինը Հոկտեմբերյան Հեղափոխության հեղինակ: Բրեստ: Քաղաքացիական պատերազմ: Նեպ և նահանջ: Նահանջի դադարեցումը 11-րդ համագումրում, 1922 թվին: Լենինը և ազգային հանրապետությունները (Լենինի նամակը կովկասյան կոմունիստներին):

Ձրույցի ժամանակ կարմիր թելի պես պետք և անցնի. ա) Իլյիչի «մասնավոր» կյանքի լիակատար միավորումը նրա հասարակական գործունեյության հետ, վորպես պրոֆեսիոնալ հեղափոխականի, բ) տեսականի կապը գործնականի հետ Իլյիչի մոտ:

ԿՈՄԻՏԵՐՆ ՅԵՎ ՅԵՐԻՏԿՈՄԻՆՏԵՐՆ

ՋՐՈՒՅՅ 4-ՐԴ

Մարքսի 1-ին Ինտերնացիոնալը: 2-րդ Ինտերնացիոնալի անկման պատճառները (համաշխարհային պատերազմը և մենշևիկների ու բոլշևիկների վերաբերմունքը նրա նկատմամբ): 2-րդ Ինտերնացիոնալը—բուրժուազիայի ձախ թևն է: Իմպերիալիստական պատերազմից—քաղաքացիականին տանող ուղին: Կոմունիստական Ինտերնացիոնալի առաջին հոտայնությունը: Խմբակներից դեպի մասսայական կուսակցություններ: Արևմտյան Ֆելդրադայի յերկրներում ծագած ապստամբությունների: Հոկտեմբերյան հեղափոխությունը անդրադարձումն Արևելքում: Ֆերիալումիտերները—Կոմինտերնի համատարիմ ջոկատն է: Ֆերիալումիտերյան Ինտերնացիոնալը և պատերազմը: Լիբկնեխտը և յերիտասարդությունը: Միջազգային յերիտասարդական որ: Կարմիր բանակը և Ֆերիալումիտերները: Արևմտյան կոմյերիտմիությունների դերը կոմունիսակցությունների շինարարությունում: ՌԷԿՅԵՄ Ֆերիալումիտերների առաջապահ ջոկատն է: Ֆերիալումիտերների անդամների պարտականությունները:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

(1-ին կատեգորիայի խմբակի ծրագրին կցված ձևաչափով)

I ՑԻԿԼ.—ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորը—անհատական լեզվ արդյունաբերության և (2 զրույցի համար):

Ինչպես և ապրում բանվոր յերիտասարդությունը գործարանում (բանվորական որ, աշխատավարձ, աշակերտություն և այլն):

2) Ինչպես և ապրում այլ գործարանների յերիտասարդությունը:

3) Առաջ ինչպես էլին ապրում գործարանի յերիտասարդ բանվորները:

4) Կարելի՞ յե արդյոք ավելացնել գործարանի բանվորներին աշխատավարձը և ինչպես անել այդ:

5) Ինչ նշանակություն ունի աշխատանքի արտադրողականությունից բարձրացումը:

6) Ինչ վերադիր ծախսեր ունենք մենք և ինչպես պայքարել դրանց դեմ:

7) Ինչպե՞ս և վերաբերվում բանվորը մասնագետներին:

8) Ինչպե՞ս հնում բանվորները շահագրգռված չեն յեղի արտադրությունից բարձրացմամբ:

9) Ինչ բան և արդյունաբերությունից բարձրացումը:

10) Գործարանն ոգուտ կամ շահ տալիս է, թե իզուր տեղն է աշխատում:

11) Պետական գործարաններում շահագործում կա՞ արդյոք:

12) Կա՞ արդյոք շահագործում մասնավոր գործարաններում:

13) Ինչպե՞ս համար պետք է ազգայնացվեր արդյունաբերությունը:

14) Արդյունաբերությունից առավարիվում մասնավոր կապիտալի վերածնունդն վտանգ կա՞ արդյոք:

15) Ինչպե՞ս պիտի լինի կոմյերիտականը արտադրությունում:

16) Ինչ պետք է անի կոմյերիտականը արտադրողականությունից բարձրացման առավարիվում:

17) Ինչ պետք է անի կոմյերիտականը վերադիր ծախսերի դեմ պայքարելու համար:

18) Ինչպե՞ս պիտի վերաբերվի կոմյերիտականը մասնագետներին:

19) Ինչ նշանակություն ունի գործարանային դպրոցը աշխատանքի արտադրողականությունից համար:

20) Ինչ է նշանակում «բանվորն արդյունաբերությունից տերն է» գաղափարը:

21) Ինչ նշանակություն ունի այն հանդամանքը վոր բանվորի ձեռքում և գտնվում արդյունաբերությունը:

23 Ո՞վ և ինչպե՞ս է հետևում Կոդեքսի կատարմանը:

24) Ինչպե՞ս և աշխատում Գնահատու-Կոնֆլիկտային հանձնաժողովը:

25) Ինչ է անում յերիտասարդությունից ներկայացուցիչը Գործարանային կոմիտեում:

26) Վորո՞նք են Գործարանային կոմիտեի անելիքները:

27) Վորո՞նք են արհեստակցական միությունից անելիքները:

28) Ի՞նչ է անում յերկասարկության ներկայացուցիչն արհեստակցական միություններում:

29) Ի՞նչպես է աշխատում Գործարանային կոմիտեն:

30) Համեմատելով քո կոոպերատիվի աշխատանքն ուրիշ կոոպերատիվների աշխատանքի հետ:

31) Վճիրն է կոոպերացիայի նշանակութունը և ի՞նչպես այն գնել պատշաճ բարձրության վրա:

32) Ի՞նչ է անում ԼԿՅԵՄ ներկայացուցիչը կոոպերատիվի վարչության մեջ:

33) Ուրիշ ի՞նչ ներկայացուցիչներ կան գործարանում բոլոր այդ կազմակերպությունների մեջ:

34) Ինչո՞ւ յեն պրոֆեսիոնալ և այլ կազմակերպությունները զեկավարելու համար կոմունիստ բանվորների ընտրում:

Ինչպե՞ս է կուսակցությունը զեկավարում այդ կազմակերպությունների աշխատանքը:

36) Ինչո՞ւ յեն բանվորներն իրենց ղեկառնությունը կիրառում կուսակցության միջոցով:

37) Ի՞նչպես է ԼԿՅԵՄ բժիշկը մասնակցում բանվորական կազմակերպություններից յուրաքանչյուրի մեջ:

38) Ի՞նչ թերություններ կան այստեղ և ինչպես պետք է վերացնել նրանց:

ԲԱՆՎՈՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՐՆ Ե

39) Ո՞վ և ի՞նչպես է խորհուրդը ընտրում:

40) Ո՞վ և ի՞նչպես է ընտրում բանվորա-գյուղացիական կառավարությունը:

41) Գործարանները խլելը բավական է արդյոք բանվորների կյանքը բարելավելու համար:

42) Ինչո՞ւ յե հին իշխանությունն ոգնել կապիտալիստներին ու ազնվականներին և ի՞նչպես է նա այդ արել:

43) Կարո՞ղ է արդյոք հավասարություն լինել բանվորի ու կապիտալիստի միջև:

44) Ի՞նչ իրավունքներ ունի այժմ բանվորը:

45) Ի՞նչպես է աշխատում պրոլետարական դատարանը:

46) Ինչի՞ համար է անհրաժեշտ Կարմիր բանակը:

47) Ինչպե՞ս է զբաղվում գործարանի բանվորների աշխատանքի պաշտպանության գործը:

48) Ի՞նչ է Սոցիալական Ապահովարությունը և ի՞նչպես է այն կիրառվում:

49) Բանկարանային հարցը բանվորների համար ի՞նչ նշանակութուն ունի առաջներում և ի՞նչ նշանակութուն ունի այժմ:

50) Ի՞նչպես վերացնել բնակարանային ճգնաժամը:

51) Ի՞նչ է բնակարանային կոոպերացիան:

52) Ի՞նչ նշանակութուն ունի կուլտուրան բանվորի համար:

53) Առաջին հերթին ռևիզի և ծառայում ժողովրդական կրթությունը:

54) Բանվոր յերկասարկության դպրոցի տեղը ժողովրդական կրթության սխեմայի մեջ:

55) Առողջության պահպանումը և բանվոր դասակարգը:

56) Ո՞վ է աշխատում պետական հիմնարկություններում և ի՞նչպես է կոմկուսակցությունը նրանց մեջ իր ազդեցությունն ապահովում:

57) Ի՞նչ է բյուրոկրատիզմը և ի՞նչպես պայքարել նրա դեմ:

58) Ի՞նչ նշանակութուն ունի Բանգյուղտեսչությունն ապարատի վերակառուցման համար:

59) Բանգյուղտեսչությունը վորպես մասսաներին կառավարելու մեջ գրավող գեներ:

60) Ի՞նչ անելիքներ ունի կոմյերիտականը բյուրոկրատիզմի դեմ պայքարելու ասպարիզում:

61) Վճիրն է կոմյերիտականի գործնական աշխատանքը խորհրդային շինարարության ասպարիզում:

ԲԱՂԱՔԻ ՄԵՐՁԵՑՈՒՄԸ ԳՅՈՒՂԻ ՇԵՏ

(4-րդ գրույցի համար)

62) Դյուղում կուլակներից կարճ էն արդյոք նոր կալվածատերեր յերեկան գալ:

63) Խորհրդային իշխանությունը ի՞նչպես է պայքարում այդ յերեկայի դեմ:

64) Կոոպերացիան ի՞նչ նշանակութուն ունի, ինչ թշնամիներ ունի կոոպերացիան:

- 65) Ի՞նչ բան է գողումը (СМЫЧКА):
- 66) Ինչո՞ւ գյուղին եժան ապրանք է պետք:
- 67) Ի՞նչ նշանակություն ունի գրամական ռեֆորմը գյուղացիների համար:
- 68) Ի՞նչ նշանակություն ունի արտասահման հաց արտահանելը:
- 69) Ի՞նչ նշանակություն ունի Ռուսաստանի համար մեքենաների ներմուծումը:
- 70) Ի՞նչու մենք չենք համաձայնվում ցարական պարտքերը վճարելու:
- 71) Ինչո՞ւ համար է մեզ պետք արտաքին առևտրի մեծաշնորհը:
- 72) Ինչո՞ւ համար գյուղացին պետք է պաշտպանի խորհրդային իշխանությունը:
- 73) Ինչո՞ւ առանց արդյունաբերության գյուղացիական տնտեսությունը չի բարձրանում:
- 74) Ի՞նչ է բանվորների ու գյուղացիների դաշինքը:
- 75) Ի՞նչ աշխատանք են կատարում գյուղացիական բջիջները:
- 76) Մեր ձեռքում ասպարիզում ի՞նչ դեր է խաղում Կոմյերիտությունը:
- 77) Գրագիտության նշանակությունը գյուղի համար է խրճիթ-ընթերցարանի աշխատանքը:
- 78) Գյուղացիական յերիտասարդության գպրոցը:
- 79) Ի՞նչ նշանակություն ունի Կոմյերիտությունից աշխատանքը գյուղում:
- 80) Ինչո՞ւ համար է շեֆությունը և ի՞նչ է արել գործարանը շեֆության վերաբերյալ:

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆ

(1-ից գրույց. — կանոնադրություն)

- 1) Յերիտասարդությունը կազմակերպված է արդյոք գործարանում և թե՛ կողմից:
- 2) Ինչո՞ւ գործարանում հարկավոր է ունենալ Կոմյերիտական բջիջ:
- 3) Ո՞վ է մտնում մեր Միություն մեջ:

- 4) Կան արդյոք Միությունից դուրս անկուսակցականներ, արժե՞ արդյոք նրանց զրավել մեր շարքերը:
- 5) Հարկավոր է արդյոք Միության մեջ գրավել գյուղացիական յերիտասարդությունը:
- 6) Այլ վայրերում գոյություն ունե՞ն արդյոք բջիջներ:
- 7) Կապիտալիստական արտադրության մեջ ի՞նչ է հանդիսանում յերիտասարդությունը:
- 8) Ինչպե՞ս կարող է յերիտասարդությունը պաշտպանել իր շահերը:
- 9) Ի՞նչ է բրոնյան և ի՞նչ է նա տվել:
- 10) Արտադրության մեջ թե՛ն և հարկավոր գործարանային գպրոցը:
- 11) Ի՞նչ մասնակցություն է ցույց տալիս Կոմյերիտությունը գործարկումների, արդգործարկումների, արտադրական խորհրդակցությունների և պրոլետարական այլ կազմակերպությունների աշխատանքներին:
- 12) Կարո՞ղ է արդյոք Կոմյերիտությունից աշխատի անդամ լինել, վոր ակտիվ մասնակցություն չունենա Միության և պրոլետարական այլ կազմակերպությունների (ակումբներ, յերիտ-սկզյաններ) աշխատանքներին:
- 13) Ինչո՞ւ Կոմյերիտականը պետք է զրավել ֆիզկուլտայով:
- 14) Ի՞նչ հիմնական խնդիրներ է հետապնդում Կոմյերիտությունը քաղկրթության ասպարիզում:
- 15) Ինչո՞ւ Կոմյերիտությունը աշխատում է կուսակցության ղեկավարությունում:
- 16) Ի՞նչ աջակցություն պիտի ցույց տա Կոմյերիտությունը կուսակցությանը:
- 17) Ի՞նչ համառոտական համագործակցություններ զիտե՞ս դու:
- 18) Վերո՞ւ եր վերջին համագործակցություն:
- 19) Ի՞նչպե՞ս վերանվանվեց Միությունը լենինյան:
- 20) Ինչո՞ւ է Միությունը անվանվում լենինյան Կոմյերիտական Յերիտասարդության Միություն:
- 21) Վերո՞ւ համագործակցություն է քննությունից առնվել Կոմյերիտական դաստիարակության հարցը (համառոտ պատմել):
- 22) Վերո՞ւ համագործակցություն է ընդունված Կարմիր Նավատորմի շեֆությունը և ինչո՞ւ:



- 23) Վերստից ե քննության առնվել գործարանային դպրոց-
ների և բրոնյայի հարցը:
- 24) Ի՞նչ ե ուսման կտրվածությունը կյանքից:
- 25) Կոմյերիտմիություն մեջ ուսուցումն ինչպես և կապ-
ված կյանքի հետ:
- 26) Կարելի՞ չի արդյոք դեն շարտել բուրժուազիայի գիտե-
լիքները:
- 27) Ի՞նչ ե մարքսիզմը և ի՞նչ նշանակություն ունի նա-
բանվոր դասակարգի համար:
- 28) Ինչո՞ւ ԽՍՀՆ յերիտասարդությունն ավանդ ե թողել՝
վերացնել անգրագիտությունը:
- 29) Կարճը ե արդյոք կոմյերիտական անգրագիտ լինել:
- 30) Ի՞նչ ե պրոլետարական բարոյականությունը:
- 31) Ի՞նչ ե նշանակումը Կոմյերիտմիությունը—կուսակցու-
թյան պահեստի ուժն ե:
- 32) Ի՞նչ ե նշանակումը Կոմյերիտմիությունը—բանվորա-
դյուղացիական յերիտասարդության առաջնորդն ե:
- 33) Առաջին հերթին ի՞նչ պիտի սովորի կոմյերիտականը:
- 34) Ի՞նչ տարբերություն կա մարքսիզմի ու լենինիզմի
միջև:
- 35) Վերն են ԼԵՆԻՆԻ հիմնական գաղափարները:

Ռ Կ Կ

ԱՌԱՋԻՆ ԶՐՈՒՅՑ.—ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԲՁԻՋ

- 1) Ի՞նչ ե անում կուսակցական բջիջը գործարանում (նը-
կարագրել բջիջի աշխատանքները բոլոր ձյուղերում՝ տնտեսա-
կան, կուլտուր-լուսավորական և այլն):
- 2) Ո՞վ իրավունք ունի բջիջի մեջ մտնելու (ցույց տալ
բջիջի բանվորական կազմը, լենինյան կոչի որինակներ, ավելի
գիտակից և առաջավոր բանվորներին):
- 3) Ի՞նչի համար ե պետք բջիջը գործարանում (բջիջը վոր-
պես վորջ կուսակցության գիտող և զեկավարող որդան):
- Ինչո՞ւ համար հարկավոր ե Կոմունիստական կուսակցու-
թյունը: Կարճը են արդյոք բոլոր բանվորները կառավարել պե-
տությունը, կուսակցությունը, վորպես պրոլետարիատի ավելի
գիտակից մի մասը, կառավարում ե պետությունը խորհուրդնե-
րի, արհեստակցական միությունների, բջիջների միջոցով:

- 5) Ինչո՞ւ համար ե հարկավոր բանվոր-պատկազդին կու-
սակցություն ունենալ մինչև հեղափոխությունը: Պայքար ցա-
րիզմի դեմ և պայքար հանուն խորհուրդների իշխանության:
- 6) Ի՞նչ ե կուսակցական գիտելիքնան և ինչո՞ւ չի նա-
հարկավոր:
- 7) Ինչո՞ւ կուսակցությունը պետք ե ուշադրություն դար-
ձնի յերիտասարդության վրա:
- 8) Ինչո՞ւ չեն ձգտում կոմունիստները (լուսաբանի շահա-
գործման վոչնչացումը, պատերազմների վոչնչացումը և այլն,
ապագա կոմունիստական հասարակակարգը առանց մասնավոր
սեփականության, բարձր կուլտուրայով և այլն):
- 9) Ի՞նչ ե նշանակումը «պրոլետարներ բոլոր յերկրների,
միացե՛ք» լուղունգը (լուսաբանի բանվոր դասակարգի միջադ-
գային համերաշխությունը, վորը բղխում ե նրանից, վոր նա
ամենուրեք միենույն պայմաններում շահագործվում ե և ամեն
տեղ շահագործված ե բուրժուազիայի տապալումով), Արևմուտ-
քում և Արևելքում:
- 10) Ինչո՞ւ կուսակցության մեջ ավելի շատ բանվորներ
կան քան գյուղացիներ:
- 11) Ի՞նչ նշանակություն ունի գործարանային կոփումը:
- 12) Ի՞նչ հոգեբանություն ե սակեղծում գյուղացու մեկու-
սացրած աշխատանքը:
- 13) Ի՞նչ ե մանր-բուրժուական վոգին:
- 14) Գործարանում կան արդյոք գյուղից դուրս յեկած բան-
վորներ:
- 15) Ինչպես և այդ անդրադառնում նրանց տեսակետների վրա:
- 16) Յերիտասարդության շրջանում մանր-բուրժուական
ազդեցությունն արտահայտվում ե արդյոք:
- 17) Ո՞վ ե ընդունվում կուսակցության մեջ:
- 18) Վոչ-պրոլետարական խավերից յիլածներից ո՞ւմ են
ընդունում կուսակցության մեջ:
- 19) Կուսակցության առանձին անդամների բարոյալքման
վտանգ կա:
- 20) Ինչպես ե կուսակցությունը դրա դեմ պայքարում:
- 21) Ինչպես են բանվորներին զեկավար պաշտոնների քա-
շում Բանգյուղտեսություն և Կենտ. Վեր. Հանձնաժողովի մեջ:
- 22) Ի՞նչ պետք ե անել, վոր կուսակցությունը չենթարկե-
վի նեպամական ու մանր-բուրժուական թեքումների:

23) Կարող եւ արդյոք կուսակցությունը աշխատել միասնականութեան բացակայութեան դեպքում:

24) Ինչո՞վ եւ ձեռք բերվում միասնականությունը:

25) Ինչո՞ւ յետմանական բնույթը կուսակցութեան հիմքը հանդիսանում:

26) Ի՞նչ նշանակութիւն ունի հին գլխավոր մեր կուսակցութեան մեջ:

27) Ի՞նչ տեսակ կուսակցութիւն են ցանկացել հիմնել մենշեւիկները 1903 թվին:

28) Ո՞վքեր են լիկվիդատորները եւ դեպի ո՞ւր ելին տառապանք:

29) Ի՞նչ դեր խաղաց բանակը 1917 թվի հեղափոխութեան մեջ:

30) Ինչո՞ւ մենշեւիկները դեմ ելին բանվորների եւ գյուղացիների դաշինքին:

31) Ինչո՞ւ յեն մենշեւիկները մանր-բուրժուական կուսակցութիւն:

32) Ի՞նչ դեր խաղացին նրանք բուրժուազիայի համար փեշավարեան որերին:

33) Ինչո՞ւ կիսադիմակալոր մենշեւիկներն ավելի վտանգավոր են, քան բաց-ճակատները:

34) Ի՞նչ եւ նշանակում մենշեւիկները բուրժուազիայի ձախթեմն են:

35) Ինչո՞ւ Վլադիմիր Իլյին իր ամբողջ եներգիան առաջին հերթին մենշեւիկներին դեմ պայքարելուն եւ ուղղել:

36) Ի՞նչպէս պահեցին իրենց մենշեւիկները բաղադրացիական պատերազմի ժամանակ:

37) Պայքարը մենշեւիկներին դեմ:

38) Յերիտասարդութեան վերաբերմունքը դեպի հին գլխավորիան Խնչպէս պիտի լինի:

39) Ի՞նչ եւ նշանակում Կոմյերիտմութիւնը—առաջադրույն լինի իդմի դպրոցն եւ:

2. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՒԱԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇԵՍՏՆ Ե

40) Ի՞նչ դեր եւ խաղում կուսակցութիւնը հեղափոխութեան մեջ:

41) Բանվոր դասակարգի վեր տարրերին եւ ընտրում կուսակցութիւնը:

42) Ինչո՞ւ յետմանականութիւնն աշխատում ԲԿԵ (բ.) Կեկավարութեամբ:

43) Ի՞նչ փոխարարութիւններ կան կուսակցական բըշիշի եւ գործարանային այլ կազմակերպութիւնների միջև:

44) Ինչո՞ւ կոմյերիտականը պետք եւ ձայն տա կուսբշիշի բոլոր առաջարկութիւններին:

45) Ինչո՞ւ կուսակցութիւնը փոշ բոլոր վորոշումներն եւ անկուսակցականների շրջանը հանում:

46) Ի՞նչ եւ կուսակցական դիսցիպլինան եւ ինչո՞ւ համար եւ նա հարկավոր:

47) Տարբերութիւն կա՞ արդյոք գործարանի վերատեսչի եւ հասարակ բանվորի միջև բշիշի եւ վորջ կուսակցութեան ներսում:

48) Ի՞նչ աշխատանք եւ կատարում կուսբշիշը:

49) Ինչո՞ւ յես դու Կոմյերիտմութեան մեջ մտել:

50) Ինչպէս եւ ուղղում քեզ պատրաստել կուսակցութեան մեջ մտնելու համար:

51) Ի՞նչ աջակցութիւն եւ ցույց տալիս Կոմյերիտմութիւնը կուսակցութեանը:

52) Կարելի չէ՞ արդյոք կոմունիստ դառնալ առանց կուսակցութեան ծրագիրն ու պատմութիւնը յուրացնելու:

53) Պարտավոր եւ արդյոք կոմյերիտականը հետաքրքրվելու կուսակցական աշխատանքով եւ կյանքով:

54) Պարտավոր եւ արդյոք կոմյերիտականը մասնակցելու կուսակցական դիսկուսիային (չեղորութեան թերիայի սխալները):

55) Միշտ այդ հնարավոր եւ արդյոք:

56) Ինչո՞ւ կուսակցութիւնը յերիտասարդութեան շրջանում աշխատելու համար հատուկ բաժին չի հիմնում:

57) Ո՞ւմ միջոցով եւ ինչպէս եւ կուսակցութիւնը դեկավարում Կոմյերիտմութեանը:

3. ԿՈՄԻՆՏԵՐՆԸ ՅԵՎ ՅԵՐԻՏԿՈՄԻՆՏԵՐՆԸ

58) Ի՞նչ փոխարարութիւններ կան Յերիտմիտներին եւ Կոմիտներին միջև:

59) Յերիտասարդութեան խաղացած դերն իմպերիալիստական պատերազմի ժամանակ:

60) Ինչպե՞ս չե՞ս կարելի լինի ներկայացնել յերիտասարդության առաջնորդը:

61) Յերիտասարդության Ինտերնացիոնալն ի՞նչ վերաբերմունք է ցույց տվել ուսանական հեղափոխությանը:

62) Վերադարձիր Իլլիչին ի՞նչ վերաբերմունք է ցույց տվել Յերիտասարդության Ինտերնացիոնալին:

63) Ի՞նչ գիտես դու Յերիտակոմինտերնի 1-ին կոնգրեսի մասին:

64) Ի՞նչ դեր են խաղացել Արևմուտքի յերիտասարդ կոմունիստական կազմակերպությունները կոմկուսակցություններ հիմնելու և ամրապնդելու գործում:

65) Արևմուտքի յերիտասարդությունն ի՞նչպես է պայքարում պատերազմի դեմ:

66) Ի՞նչպես են հիմնվում յերիտասարդական միություններն արտասահմանում:

67) Յերիտակոմինտերնը ի՞նչպես է պաշտպանում բանվոր յերիտասարդության ամենորոյա շահերը:

68) Ռուսական կոմյերիտմիությունը ի՞նչպես է ոգնում Յերիտակոմինտերնին:

69) Յերիտակոմինտերնի անդամների պարտականությունները:

ԽՄԲԱԿԻ ԿԱՊԸ ՀԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՏ

Կոմյերիտական խմբակի և հասարակական-քաղաքական աշխատանքի միջև ամենանպատակահարմար կապը, այսպես կոչված, «աշխատանքներ տալու սխեմին» է:

Նմանակի ղեկավարը ամեն մի զբաղմունքից առաջ (1—2 շաբաթ առաջ) մի խմբի համար նշանակում է վորոշ աշխատանք, որինակ՝ հետազոտել գործարանային կոոպերատիվը: Մի ուրիշ խմբի համար, հետազոտել, թե ի՞նչպես է աշխատում Գործարանային կոմիտեն: Աշխատանքի մշակումը ղեկավարի կողմից կայանում է նրանում, վոր նա կազմում է հետազոտության ճիշտ ծրագիրը, նշանակում է կատարելու ժամանակամիջոցը և տալիս է ցուցմունքներ, թե ի՞նչպես կատարել: Նմանակի ավագը խոսում է գործարանային կազմակերպությունների հետ, վորպեսզի նրանք աջակցություն ցույց տան: Աշխատանքները ցանկալի չե՞ս կազմել զբաղմունք: Յեթե այդ ընկերները չեն կարո-

ղանում զրեւ, այն ժամանակ զբաղմունք ղեկավարելու՝ պետք է նրանց ոգնի ղեկավարը կամ մի ուրիշ ավելի զբաղեցրած մեկը խմբակից կամ բլիշից: Բայց աշխատանքի զբաղմունք կատարումը պարտադիր չէ: Զեկուցումից պետք է հանել գործնական յեղբակացություններ, վորոնց կարելի լինի ոգտագործել այդ կազմակերպությունների աշխատանքում: Նմանակի պարապմունքները սկսելուց առաջ ղեկավարը ստուգում է կատարված աշխատանքը:

Պարապմունքների ժամանակ ընկերների հավաքած ավելի արժեքավոր տեղեկությունները վերցնում են իբրեւ որինակելի նյութ: Վորովհետեւ զբաղմունքները տեղի չեն ունենում ցուցական հարցերի միջոցով, հետեւապես, դուռ որինակելի բնույթ ունեցող հարցերը տալիս են այն ընկերները, վորոնք մշակել են համապատասխան աշխատանքը: Յուրաքանչյուր զրույցի յեղբակացությունները պետք է հիմնված լինեն ու բղխեն այդ նյութից:

Բայց այստեղ մի վտանգ կա: Շատ գործարաններում հասարակական կյանքի ուրույն կողմերը այնքան ել լավ չեն զբաղվում: Որինակ, կոոպերատիվներից շատերը վաճառում են ապրանքներ թանկ գներով, քան շուկայումն է: Կամ թե յերկաթուղում վարձատրությունը քիչ է, քան արդյունաբերության մեջ: Յեթե զրանից յեղբակացենք, վոր պետք չէ կոոպերատիվը, կամ սխալ է աշխատավարձի վերաբերյալ քաղաքականությունը, այդ դեպքում ստացվում են բոլորովին անճիշտ յեղբակացություններ:

Դրա համար ել նախապես սխեմի մեջ պետք է մտնի վոչ միայն տվյալ գործարանի հասարակական կյանքի ուսումնասիրությունը, այլև նրա ուսումնասիրությունը ուրիշ գործարանների հետ, արդյունաբերության ճյուղերի կամ շրջանների հետ:

Մասնավորապես, անպատճառ հարկավոր է ուսումնասիրել տեղական (շրջանային) խորհրդի աշխատանքը: Նյութի միակողմանի ընտրության այդ վտանգը ղեկավարը պետք է միշտ հիշի, վորովհետեւ մեր անդամները տրամադիր են դառնում չափազանցել մեր թերությունները կամ պակասեցնել:

Պետք է այնպես անել, վոր խմբակի ղեկավարը տվյալ գործարանի կամ տվյալ շրջանի փորձը համեմատի խորհրդային յերկրի ամբողջ շինարարության փորձի հետ: Բացի զրանից,

անհրաժեշտ և ձգտել բարձրացնելու խմբակում աշխատող, կոմ-
յերիտակա՛նի ակտիվությունը, հիմնավորելու նրա կատարած գործ-
նական աշխատանքը, ոգտագործելով նրա լեզրակացություն-
ները Միության համար, և այդ հետազոտությունից բղխող փոքր
իշատե նպատակահարմար առաջարկները իրականացնելու
կյանքում:

Դրանից բացի, խմբակի հասարակական գործնական թե-
քումը նկատի առնելով, դեկավարի գլխավոր նպատակը պետք
և լինի ընտելացնել խմբակի անդամներին լրագրի ընթերցա-
նության: Այդ աշխատանքների հետ միաժամանակ անհրաժեշտ
և սխտեմատիկ կերպով վարժեցնել խմբակի անդամներին, վո-
պեսդի նրանք հետևեն լրագրերի համապատասխան բաժիններին,
նրանցից քաղեն շոշափվող հարցերին վերաբերող այն նյութե-
րը, վորոնք վերաբերում են նրանց աշխատանքներին: Յեթե
նրանք հետազոտում են մի վորեվի բանվորական կազմակեր-
պություն, պետք է, ուրեմն, հետևեն լրագրերի «Բանվորական
կյանք» բաժնին: Կուսակցության վերաբերյալ հատվածն
անցնելիս՝ նրանք պետք է ուշադիր կերպով հետևեն
տեղական լրագրերի «Կուսակցական կյանք» բաժնին, աչքի անց-
նեն կուսակցական բժիշկների կյանքը: Նմանապես հարկավոր և
սովորեցնել նայելու լրագրերի համապատասխան բաժինները
և այնտեղից քաղելու վերջին տեղեկությունները բերքի ընթաց-
քի, կուսակցության, կոմսոմոլի գյուղում կատարած աշխա-
տանքի մասին, և այլն: Խմբակի աշխատանքներին այդպիսի
ձև տալը, վորի ժամանակ անհրաժեշտ է լինում քննվող հարցե-
րը միշտ շաղկապել կոմսոմոլի հասարակա-քաղաքական աշխա-
տանքներին, անկասկած չափազանց մեծ պատասխանատվություն է
դնում դեկավարի վրա: Նրանից պահանջվում է, վորպեսդի նա ծանոթ
լինի գործարանին ու նրա պայմաններին լավատեղյակ լինի մեր
ժամանակի փոքրիշատե սուր և կարևոր հարցերին: Նրանից պա-
հանջվում է նույնպես մեծ ձեռնություն և անհատական մերձե-
ցում խմբակներում մասնակցողներին՝ աշխատանքները նրանց
մեջ բաշխելու ժամանակ: Ուստի խմբակների պարապմունքները
սկսելուց առաջ, ամեն մի դեկավար անպայման պետք է մա-
նրամասնորեն ծանոթանա ձեռնարկության գրության հետ,
կազմի այն ծրագիրը, վորի համաձայն աշխատելու յ խմբակը
ծանոթանա բանվորական կազմակերպությունների գրության
հետ, շեֆարկյալ գյուղերի կարիքների հետ և արդեն առաջուց

պարզ գաղափար ունենա, թե իրեն շրջապատող գրությունից,
իրեն շրջապատող միջավայրից վնր հիմնականներն և նա ըն-
տրում խմբակներում վերաձակելու համար:

Վորպեսդի տված աշխատանքները դյուրեմբունելի լինեն,
մենք յուրաքանչյուր նյութի մասին տալիս ենք մի քանի խըն-
դիրներ:

Այդ խնդիրները կարծես հանդիսանում են վերնագրերն
այն աշխատանքների, վորոնք յենթակա յեն մանրամասն մշակ-
ման, համաձայն տվյալ խմբակի, ձեռնարկության և տեղերի
պայմանների: Առաջին յերեք գրությունների համար վոչ մի աշ-
խատանք տալու կարիք չկա: Դրա համար էլ մենք աշխա-
տանքները ուղղակի սկսում ենք առաջին բաժնից:

I ԲԱԺԻՆ. ԳՐՈՒԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ

ԶՐՈՒՅՑ 1-ին Հետազոտիր, ի՞նչպես են դասավորում
իրենց ժամանակը գործարանի հասակավոր
և յերիտասարդ բանվորներից մի քանիսը 3-4 որվա ընթաց-
քում (հարցնել տվյալ խմբին ու նշանակել հատուկ ժամատոմ-
սերի վրա), քանի՞ ժամ են նրանք աշխատում, ի՞նչ աշխատանք
են կատարում, վնրքան ժամանակ են կորցնում յերթեկելու,
ուտելու, ինքնակրթության համար և այլն:

Համեմատիր մյուս գործարանում կատարված նույնանման
հետազոտության հետ:

ԶՐՈՒՅՑ 1-ին Հետազոտիր մի քանի բանվորների
բյուջեն (թե հասակավոր և թե յերիտա-
սարդ, զանազան կարգի, վնրքան փող է ստանում, վնրքան և
հատկացնում զանազան կազմակերպությունների, ծախսում ուտե-
լիքի, բնակարանի, հագուստի, կուլտուրական կարիքների հա-
մար և այլն): Համեմատիր ուրիշ գործարանում կատարված
նույնանման հետազոտության հետ:

ԶՐՈՒՅՑ 1-ին Պարզիր քո գործարանի արտադրակա-
նության ամբողջ ընթացքը (սկսած հում
նյութերից կամ կիսաֆարրիկատների ստանալուց մինչև պատրաս-
տի ապրանք արտադրելը, բանվորների բաժանումն ըստ համըյա-
րությունների (ցեխ) և ծառայող պերսոնալի (ինժեներների,
տեխնիկական ծառայողների, գործարանային վարիչների) աշ-
խատանքների):

ՁՐՈՒՅՑ 1-ին Հետազոտիր, ինչպես և աշխատում արտադրական խորհրդակցությունը քո գործարանում, նույնպես և մոտակա 2-3 գործարաններում: Նյութեր հավաքիր լրագրերից:

ՁՐՈՒՅՑ 1-ին Հետազոտիր մի քանի մասնավոր ձեռնարկություններ. ինչպես են նրանք կազմակերպված տեխնիկական, վճարային և հարկ վճարում ձեռնարկության տերը և յերկմը կարող և դիմանալ նա շուկայում:

ՁՐՈՒՅՑ 2-րդ Ինչ հարցեր ելին քննվում խորհրդի պլենումում և սեկցիաներում, և ինչ գործնական ոգուտ տվեց բանվորներին այդ քննությունը:

ՁՐՈՒՅՑ 2-րդ Ինչ գործեր են քննվել միլիցիայի և դատարանի մերձավոր բաժանմունքում և ինչ վճիռներ են կայացրել դրանց մասին՝ միլիցիան և դատարանը

ա) բանվորների վերաբերմամբ,

բ) ծառայողների և

գ) նեպաններին:

Աչքի անցրու լրագրերը և ընտրիր այդ յիևնույն նյութը վորոշ ժամանակամիջոցի համար:

ՁՐՈՒՅՑ 2-րդ Ինչ աշխատանք և կատարում խորհրդի առողջապահական սեկցիան և ինչպես և զրված գործը սոցիալական ապահովագրության գանձարկում (վճարողից են ստացվում գանձարկի մուծումները, ռեմի են ամենից ավելի ոգնությունը ցույց տվել և այլն):

ՁՐՈՒՅՑ 2-րդ Ինչպես և աշխատում խորհրդի բնակարանային սեկցիան: Գրիր:

ՁՐՈՒՅՑ 2-րդ Ինչպես և աշխատում խորհրդի ժողովրդական կրթության սեկցիան: Ինչպես և զրված գործը գործարանային 2-3 դպրոցներում: Իջից քանի հոգի յին մտել բանֆակները:

ՁՐՈՒՅՑ 2-րդ Ինչ հարցեր են քննվել տեղական Բանվորա-Գյուղացիական Տեսչության մեջ և ինչ արդյունք և տվել այդ աշխատանքը: Նկարագրիր, ինչպես և աշխատանքը հետազոտում Բանվորա-Գյուղացիական Տեսչությունը:

ՁՐՈՒՅՑ 3-րդ Ինչ հարցեր են քննվել ձեր Գնահատում կոնֆլիկտային հանձնաժողովում վերջին մի քանի ամիսների ընթացքում և ինչ վճիռներ են կայացրել այդ հարցերի վերաբերմամբ:

ՁՐՈՒՅՑ 3-րդ Հետազոտիր Գործարանային կոմիտեյի և նրա բաժանմունքների կատարած աշխատանքը ու համեմատիր նրան մոտակա գործարանային կոմիտեների կատարած աշխատանքների հետ (աշխատանքի պաշտպանություն, գործարանային կոմիտեն ինչպե՞ս և մասնակցում արտադրականությունը բարձրացնելու գործում, Գործարանային կոմիտեյին կից յեղած կուլտուրական կազմակերպությունների աշխատանքը և այլն):

ՁՐՈՒՅՑ 3-րդ Հետազոտիր քո կոնսպիրատիվի բոլոր աշխատանքը (ինչո՞ւ յի նա եժան ծախում ապրանքը շուկայի համեմատությունը, ինչ ապրանքներ ունի նա, քանի խանութ ունի և ինչպես են նրանք աշխատում, ինչպես և գործում ճաշարանը և այլն): Յեթե կոնսպիրատիվը վատ և, աշխատիր իմանալ՝ թե ինչո՞ւ: Համեմատիր նրան ուրիշ գործարանային կոնսպիրատիվների հետ: Ընտրիր լրագրական նյութեր:

ՁՐՈՒՅՑ 3-րդ Պատմիր, ինչ բան գիտես կոմյերիտականի վերաբերմունքի մասին դեպի գործարանի արտադրությունն ու հասարակական կյանքը (կոմյերիտականության անդամներից վճար և աշխատում և վճարող, կան արդյոք համընթացային կազմակերպիչներ և ինչ են ստանում նրանք, ինչ հարցեր են ընդունել իրենք կոմյերիտականները, հաճախում են նրանք ժողովներ, արտահայտվում են նրանք արդյոք, միայն յերիտասարդություն մասին են խոսում, թե՞ հասակավորների մասին ել, և այլն):

II ԲԱԺԻՆ. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

ՁՐՈՒՅՑ 4-րդ Մանրամասնորեն պարզիր շեֆարկյալ գյուղի սոցիալական շերտավորումը (վճարող կուլակներ կան այնտեղ, վճարող միջակներ, չբավորներ, բատրակներ. ինչպես են բաժանված նրանց մեջ հողը, անասունները, գույքը, չբավորը կախումն ունի՞ արդյոք կուլակից և այլն): Համեմատիր ուրիշ գյուղերում կատարված նման հետազոտությունների հետ:

ԶՐՈՒՅՑ 4-ՐԴ

(Ղեկավարի համար): Կազմիր դիտարկում, ինչպես եր բաժանվում հողը հեղափոխությունից առաջ ցարի գանձարանի միջով (ազնվականների ու գյուղացիների միջով):

ԶՐՈՒՅՑ 4-ՐԴ

Կոոպերացիայի ինչպիսի տեսակներ կան գյուղում (արտադրական, առևտրական, կոոպերատիվ, հավաքական վար ու ցանք հայլն) և ինչպես են գործում այդ կոոպերատիվները):

ԶՐՈՒՅՑ 4-ՐԴ

Շեֆարկյալ գյուղում կան, արդյոք խանութներ, յեթե կան, աշխատիր իմանալ՝ ինչ գներ են նշանակել, վճար են վաստակ անում այդ խանութները, դիմանում են կոոպերատիվի մրցությանը և ինչո՞ւ, ինչպես են վերաբերվում գյուղացիները դեպի նրանց:

ԶՐՈՒՅՑ 4-ՐԴ

Մանրամասնորեն պարզիր, ինչ և առել ձեր գործարանը (կուսակցական, կոմյունիստական բժիշկ, գործարանային կոմիտեն հայլն) իր շեֆարկյալ գյուղի համար և ինչպիսի թերություններ հանդիպեց քեզ յերևան հանել այդ ուղղությամբ: Լրագրիրից քաղիր նյութեր լավ և վատ շեֆերի գործունեություն մասին:

ԶՐՈՒՅՑ 4-ՐԴ

Հետազոտիր գյուղերի խրճիթ-ընթերցարանների և I աստիճանի դպրոցների կատարած աշխատանքը:

ԶՐՈՒՅՑ 4-ՐԴ

Շեֆարկյալ գյուղի կոմյունիստական բժիշկ մասնակցում և, արդյոք, գյուղի հասարակական կյանքին (խորհրդի մեջ, գյուղացիական կոմիտեում, կոոպերատիվում, խրճիթ-ընթերցարանում հայլն), ինչպես և նա այդ կատարում և ինչ արդյունքների յե հասել:

ԶՐՈՒՅՑ 4-ՐԴ

Շեֆարկյալ գյուղի կոմյունիստական բժիշկ վճար են ուժեղ, ինչպիսի վերաբերմունք ունեն յերիտասարդություն ու ծերերը դեպի բժիշկ, ինչ ներքին դատարարական աշխատանք և նա կատարում իր անդամների մեջ, ինչ արժատական պակասություններ ևս դու նրա կատել բժիշկն այցելելիս:

ԶՐՈՒՅՑ 4-ՐԴ

Պարզիր գործարանի բոլոր կոմյունիստականների մեջ (իսկ յեթե հաջողվի նմանապես և բոլոր անկուսակցական յերիտասարդության մեջ), թե նրանցից վճար են ունի գյուղում ծնողներ (նամակագրություն ու-

նի՞ արդյոք նրանց հետ, ինչի՞ մասին են նրանք գրում, շուտ են գնում գյուղը ծնողների մոտ, ամառային արձակուրդներին գյուղում ինչ են արել, աշխատում են արդյոք խորհրդի մեջ, կոոպերատիվում հայլն և իբրեւ ինչ):

III ԲԱԺԻՆ. — ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԶՐՈՒՅՑ 1-ԻՆ

(Ղեկավարին) Կազմիր ձեր կուսակցական բժիշկի աճման դիտարկումները ըսկած իր ծագման օրից և բժիշկի կազմը (քանիսն են աշխատում զազդյահի վրա, քանիսը գործարանային կազակերպությունների մեջ, գործարանից դուրս, հասակի, սեռային կազմը հայլն): Ինչի՞նչան կոչից առաջ ու հետո:

ԶՐՈՒՅՑ 1-ԻՆ

(Ղեկավարին) Կազմիր այն հարցերիցուցակը, վերոնք վերջին ամիսները քննվել են կուսակցական ժողովներում և կուսակցական բժիշկի բյուրոյում, և ինչ գործնական արդյունք և տվել այդ քննությունը:

ԶՐՈՒՅՑ 1-ԻՆ

Իմացիր ինչ տոկոս են կազմում կոմունիստները (կուսակց. անդամները) դանադան գործարանային կազակերպությունների մեջ (գործարանային վարչության, գործարանային կոմիտեյում, կոոպերատիվի վարչության մեջ հայլն) քո և ուրիշ գործարաններում,

ԶՐՈՒՅՑ 1-ԻՆ

Ձեր բժիշկից քանիսն են անցել կուսակցության անդամ և կուսակցության թեկնածու, ուր են նրանք աշխատում և ինչ են անում: Համեմատիր քո բժիշկից կուսակցական անդամ զարձանների թիվը ուրիշ կոմյունիստական բժիշկների նույնանման նյութերի հետ: Դո կարծիքով, բժիշկից քանի տոկոսը կարող և 1925 թվի ամբողջ ընթացքում անցնել կուսակցության անդամ կամ թեկնածու:

ԶՐՈՒՅՑ 1-ԻՆ

Ինչպես և կոմյունիստականը գործադրում իր արդեցությունը ֆարրիկա-գործարանային դպրոցում (фабзавуч), պատկոմական կոլեկտիվներում, անկուսակցականների մեջ, կոմյունիստականների սեկիտաների ալումբում հայլն: Շատ անկուսակցական յերիտասարդներ կան դեռ գործարանում. ինչո՞ւ նրանք չեն մտնում Կոմյունիստական մեջ: Ինչքան ժամանակամիջոցում և ինչպես կարելի յե հասնել այդ դրության, վերապահի գործարանի բոլոր բանվոր յերիտասարդությունը անդամագրվի ԼԿՅՆ Միությունը:

ՁՐՈՒՅՑ 1-ին

(Ղեկավարին) Կազմիր Կոմիտեի անդամ թյան կառուցվածքի ուղղվածքը սկսելով բժշկից և վերջացնելով Կենտրոնական Կոմիտեով: (Ուղղվածքի մեջ պետք է մտցնել գործարանային կազմակերպությունների այն բոլոր ներկայացուցիչներին, վորոնք պատասխանատու չեն շեֆության գործում, ֆաբրիկա-գործարանային դպրոցում, պատկոմներին ու աղջիկների աշխատանքներում, բժշկի բյուրոյին կից բոլոր հանձնաժողովները, շրջկոմի, գավկոմի կամ նահանգական կոմիտեյին կից բոլոր բաժանմունքները և այլն):

ՁՐՈՒՅՑ 2-րդ

Կոմիտեի անդամները պետք է աշխատեն Կազմիր դիագնոստիկայի խմբի մասնակցում նրա աշխատանքներին: Կազմիր դիագնոստիկայի խմբի մասնակցում աշխատողները կոմիտեի անդամներին պետք է անհատապես ծանոթանան: Կարելի է և արդյոք բժշկում այնպես անել, վոր կոմիտեի անդամները կատարելիս աշխատելով կերպով վոչ մի անգամ չլինի և ինչպես անել:

ՁՐՈՒՅՑ 2-րդ

Միևնույն հարցը, ինչ վոր նախորդում էր, միայն վոչ թե Կոմիտեի անդամներին, այլ կուսակցության:

ՁՐՈՒՅՑ 2-րդ

Իմացիր կուսակցական կոմիտեում (շրջանային կոմիտեում վերջին կիսամյակում քանի հոգի էլին ընդունվել կուսակցության անդամ և ինչպես էլին ընդունվել, քանի հոգի էլին արտաքսվել կուսակցությունից, ժվեր են նրանք և ինչ արարքի համար են հեռացրել: Տեղեկացիր, ինչ և հարկավոր իմանալ կուսակցության մեջ ընդունվելու համար:

ՁՐՈՒՅՑ 2-րդ

Ձեր բժշկում քանի կուսակցական անդամներ կան նախահեղափոխական ստաժով (մինչ հեղափոխության): Սոսիալիստական 2—3-ի հետ և իմացիր նրանց կենսագրությունները, հեղափոխական գաղտնի գործունեությունները, յեղել են նրանք բանում, քանի անգամ, վորտեղ, յեղել, ինչ աշխատանք են նրանք տանում կուսակցության մեջ այժմ: Յեթե քո բժշկում աշխատող կուսակցական հին անդամներ չկան, աշխատիր գրուցել ուրիշ բժշկների կուսակցական հին անդամների հետ:

IV ԲԱԺԻՆ. ԿՈՄԻՏԵՐՆԸ

ՁՐՈՒՅՑ 1-ին

Իմացիր հասակավոր բանվորներից, թե ինչպիսի մասնակցություն և ունեցել գործարանը հեղափոխական շարժման մեջ մինչև վերջին հեղափոխությունը (ինչ մեծ գործադուլներ են յեղել գործարանում, ով եր առաջ նրա տերը, բանվորներն ինչպես էլին վերաբերվում դեպի նա, վոր հեղափոխական և դուրս յեղել այդ գործարանից և այլն):

ՁՐՈՒՅՑ 1-ին

Գործարանն ինչ մասնակցություն և ունեցել հեղափոխության հեղափոխության մեջ, կուսակցական բժշկ կամ այն ժամանակ, ովքեր էլին մշտնադարձ այդ բժշկի մեջ, ինչպես հաջողվեց վոնդել գործարանի տիրոջը: Կար արդյոք յերիտասարդական սխալության բժշկ, յեթե այո, ինչ բանում արտահայտվեց նրա մասնակցությունը հեղափոխության անցքերում:

ՁՐՈՒՅՑ 1-ին

Պարզիր գործարանի պատմությունը հեղափոխության հեղափոխության մինչև ներկա որերը (կանոց և առել արդյոք գործարանը, յերը, վորքան ժամանակով և ինչպես, վորքան և փոփոխվել բանվորների կազմն այդ ժամանակամիջոցում, հեղափոխությունից հետո ինժեներներն ու վարպետները ինչպես էլին վերաբերվում դեպի գործարանի բանվորները, ոգնում էլին նրանք գործարանի աշխատանքներին թե խոչընդոտ էլին հանդիսանում, գործարանն ինչ միջոցներ եր պատրաստում քաղաքացիական պատերազմի ժամանակ, այժմ, ինչպես անցկացրեց գործարանը ՆեՊ-ի առաջին որերը, գործարանը յերը սկսեց վերականգնվել, ընդարձակվում և նա այժմ և այլն):

ՁՐՈՒՅՑ 2-րդ

1923 թ. հեղափոխության գերմանական անցքերի մասին գու ինչ էս հիշում: Ինչպես էլին վերաբերվում բանվորները գերմանական դեպքերին և և ինչով եր արտահայտվում նրանց պատրաստակամությունն ոգնելու գերմանական բանվորներին:

ՁՐՈՒՅՑ 1-ին

Հետադուրս — ինչ և անում ՄՈՊՐ-ի բժշկը և ինչպիսի ոգնություն պիտի ցույց տա նա Արևմուտքի բանվորությունը:

ՁՐՈՒՅՑ 1-ին

Սոսիալիստական մի այնպիսի բանվորի հետ, վորն իմպերիալիստական պատերազմի ժա-

մանակ յեղել և զինվոր և զբիր նրա տպավորությունները պատերազմի մասին:

ԶՐՈՒՅՑ 1 իՆ (Ղեկավարին) Կազմիր դիպրամմա՝ ինչ և ավել պատերազմն ամբողջ աշխարհում (մարդկային կորուստներ, սպանվածներ, վիրավորներ, հաշմանդամներ, ծնունդների նվազում, ժողովրդական տնտեսության քայքայում, անապաստան վիճակ):

ԶՐՈՒՅՑ 1-ԻՆ Բջիջն ինչ աշխատանք և կատարում կարմիր բանակայինների դորամասերում: Ինչպես են ապրում կարմիր բանակայինները դորանոցներում (ինչպես և սովորում պատերազմական գործը, դրագիտությունը ինչպես և անցկացնում իր ազատ ժամանակը և այլն):

ՄԻ ՔԱՆԻ ԿԱՆՈՆՆԵՐ ՏՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1) Աշխատանքը դու կարող ես կատարել կամ ինքնուրույն կերպով, կամ թե հավաքակաճորեն, անպատճառ քո խմբակի ընկերների հետ:

2) Աշխատանքը պետք է կատարված լինի ճիշտ ժամանակին:

3) Վորպեսդի կատարես արված աշխատանքը, դու տեղեկություններ ստանալու համար պետք է զիմես դանազան կազմակերպությունների պատասխանատու ղեկավարներին: Աշխատիր միշտ ստույգ՝ ճիշտ են արդյոք քո ստացած տեղեկությունները:

4) Մի մոռացիր, վոր քո ստացած արդյունքը հետաքրքրական են վոչ միայն խմբակի համար, այլ նրանք պետք է հիմք ծառայեն նաև բջիջի աշխատանքները բարելավելու համար:

Ահա թե ինչու դու ամենալուրջ ուշադրությամբ պիտի մտածես այն յեղրակացությունների մասին, վորոնք բղրում են քո կատարած ու մշակած տեղեկություններից:

5) Չմոռանաս, վոր դու խմբակում հաշիվ ես տալու քեզ արված աշխատանքի մասին: Ուստի պատրաստվիր համառոտ և ճիշտ հաշվետվության:

ԽՍԲԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵՓՈԴՆԵՐԸ

1) Կոմունիստական Յերիտասարդական միության խմբակի ղեկավոր խնդիրն է ծանոթացնել կոմյերիտականին Իլյիչի հիմնական գաղափարների հետ Կոմյերիտմիության հասարակական գործնական աշխատանքի լույսով:

Նրա կազմը, վոր բաղկացած է ամենահում, անմշակ տարերից, ինքնին վորոշում է նույնպես խմբակի աշխատանքի մեթոդները, նրանց հիմքում դրված պարապմունքների առավելագույն շաղկապումը հասարակական-քաղաքական աշխատանքների հետ և խմբակի անդամների առավելագույն ակտիվությունն ու հավաքական ինքնագործունեությունը:

2) Խմբակը չպետք է ձգտի տալ անդամներին ամեն տեղեկ գիտելիքներ: Նա պետք է տա ղեկավոր փաստերը, հիմնական յեղրակացությունները, սովորեցնի միության անդամներին շրջապատող հանդամանքները ճշմարիտ, տալ նրա արժեքը միության որչեղարվ աշխատանքներում: Դրա համար ել խմբակների աշխատանքի մեթոդների, մեթոդական ձևերի հիմքը կազմող 4 սկզբունքներն են:

1) Խմբակի աված նյութի վորոշակիությունը: Բոլորը պետք է կառուցված լինի փաստական, ըստ կարելույն խմբակի անդամներին հայտնի նյութի վրա: Նրանց գործողությունների հետ շաղկապել ընդհանուր յեղրակացությունները, ցույց տալ կոնկրետ որինակներով:

2) Մասնավորից ընդհանուր յեղրակացություն արված, ինչպես որինակ, պրոլետարիատի դիկտատուրայի վերաբերյալ հասկացողությունը պետք է հետեցնել խմբակին մասնակցողներին ծանոթ մի ամբողջ շարք ատամնավոր անիմները դիտելուց հետո, (խորհրդային մարմինների ձեռնարկությունների բան վորների կազմակերպությունը եսլին), վորն ըմբռնել և տալիս խորհրդային շինարարության ամբողջ մեխանիկան: Միտածանակ հարկավոր է տալ նույնպես մի քանի պատմական տեղեկություններ, վոչ մի դեպքում նրանցով ծրագրերը չձանդարեցնելով:

3) Պարապմունքների շաղկապումը կոմյերիտականի գործնական աշխատանքների հետ, նրա վորձի, գիտելիքների ու պահանջների հետ:

4) Բոլոր պարապմունքների կապը ժամանակակից կյանքի հետ, ամեն մի հարցի առանձին մշակումն այն բոլոր խնդիր-

ների լուսաբանությամբ, վորը ներկայումս դնում է կուսակցությունը տվյալ ճյուղի վերաբերմամբ:

Այդ պատճառով ել միության խմբակի ծրագրի ամբողջ կառուցվածքը և մեթոդական ձևերի հիմունքները ղեկավարից պահանջում են չափազանց մեծ ձկունություն, կարողություն՝ տիրապետելու անդամների շրջապատող պայմաններին և նրանից յեղնելով առաջ տանել խմբակի աշխատանքները: Կատարելապես անհրաժեշտ է, վորպեսզի ղեկավարը լրջորեն ու խնամքով պատրաստված լինի խմբակի յուրաքանչյուր պարապմունքի համար:

Զ Ր Ո Ւ Յ Ց Ն Ե Ր

Խմբակի աշխատանքների հիմնական ձևը զրույցն է: Նա տեղի յե ունենում հարցերի ձևով. կամ ղեկավարն է տալիս սովորողներին, կամ, ընդհակառակը, սովորողները՝ ղեկավարին. դրանով ստեղծվում են այն անհրաժեշտ նախադրյալները, վորոնց շնորհիվ խմբակի բոլոր անդամներն ակտիվ մասնակցություն են ունենում աշխատանքներում: Զրույցը վարելու գործը բավականաչափ հեշտանում է նրանով, վոր Կոմյերիտմիության խմբակի ծրագիրը յեղակիտ է ընդունում տվյալ ձևակերպության կյանքը և իր ձևերում գործիք՝ միության անդամների գործնական աշխատանքը, այսինքն անդամահատում է այն նյութերը, վորոնց հետ կոմյերիտականը անպայման ծանոթ է իր արտադրության և Միության կենցաղի միջոցով:

Խմբակի պարապմունքները պետք է ընթանան կենդանի զրույցների ձևով, վարելի ղեկավարությամբ, վորն առաջի հերթին հենվում է խմբակը հաճախողներից վերցրած նյութերի վրա, պատկերացնելով պարապմունքների հիմնական միտքը, Միության անդամների հասարակական գործնական աշխատանքներից և նրանց շրջապատող պայմաններից բերած օրինակներով: Զրույցը վոչ մի դեպքում չպետք է ծանրաբեռնել մեծ քանակությամբ փաստերով ու թվերով, հարկավոր է նրանցից վերցնել ամենահիմնականները, ընդամենը մի քանի ցույցերով:

Ղեկավարը զրույցի ժամանակ պետք է աշխատի աստիճանաբար ավելացնել նոր նյութեր, արտահայտելով սեղմ կերպով յուրաքանչյուր անգամ 10—14 բույն տեղեկությամբ:

Պարապմունքները զրույցի ձևով տանելով, չպետք է մոռանալ հետևյալ զրույթունը, վոր ակտիվ են դառնում խմբակի

անդամներից մի քանիսը միայն՝ ամենազարգացածներն ու ընդունակները: Ղեկավարը պետք է աստիճանաբար մասնակից անե բոլոր ունկնդիրներին, հարցեր տալով «Լուռ մնացողներին», հիմնվելով կյանքի փորձերից վերցրած ամենահասարակ փաստերի վրա:

Աշխատանքների այդ ձևով տանելը պահանջում է, վորպեսզի ղեկավարը նախապես կազմի զրույցի ծրագիրը, նշանակի ունկնդիրներին տրվելիք հիմնական հարցերը, ընտրելով խմբակի անդամների հետազոտություններից և այլ գործնական պարապմունքներից ստացված փաստերը, զրույցի հիմնական մոմենտները պատկերացնելու նպատակով:

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ. Միաժամանակ կոմյերիտական խմբակը պետք է իր հաճախողներին ընտելացնե ընթերցանության, ըստ վորում, հաշվի առնելով այն հանգամանքը, վոր խմբակի կազմի իր մեծամասնությամբ բաղկացած է ընթերցանության և գիրք բանացնելու գործին բոլորովին անսովոր մարդկանցից:

Բացի դրանից հարկավոր է հիշել, վոր խմբակին մասնակողը զբաղված է ֆաբրիկայի կամ գործարանի աշխատանքով, զբաղված է կոմյերիտական աշխատանքներով, ու այդ պատճառով ել տանը կատարելու համար նա չափազանց քիչ ժամանակ ունի և համարյա չի ընտելացել նրան: Այստեղից ել անհրաժեշտություն է առաջ դալիս՝ խստիվ ստիճանափակել այն նյութի ծավալը, վորի հետ նա պիտի ծանոթանա տանը խմբակի համար. ամենաանշան հողվածներն ու ճառերը, քաղվածքները լինենի ճառերից, ուրիշ ձևակերպություններից՝ ամենամատչելի ու փոքրիկ կտորները, կարող են նրա տեսարանը պարապմունքների համար նյութ ծառայել: Կարելի յե զրույցների միջոցին բարձր ձայնով կարգալ դանազան տեսակի հատվածներ. նպատակահարմար կը լինի խմբակի անդամների այդ տեսակ ընթերցումները վարել փոքրիկ խմբավորումներով: Ղեկավարը պետք է ոգտադործե մի քանի կազմակերպութունների մեջ լայն ծավալ ստացած խմբական ընթերցանության ցանցը, չաղկապելով այդ աշխատանքը խմբակի հետ, ցուցմունքներ տալով ընթերցանության մասին, պետք է խմանա այն, ինչ վոր կարգում են խմբակում:

ԶԵԿՈՒՑՈՒՄ — ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ

Զպետք է բավականանալ միայն զրույցով: Համաձայն այն

աշխատանքների, հետազոտությունների, վորոնք կատարվում են ղեկավարի հանձնարարությամբ, խմբակում տրվում են համառոտ-գեկուցում-տեղեկանքներ (5—8 ըրպե), որինակ՝ մեր ձեռնարկության բանվորների ծագումը կամ մեր ձեռնարկության բանվորները ինչպես հանդես յեկան և թե՛ հետ և յին պայքարում հոկտեմբերյան որերին, խմբակի աշխատանքների ընթացքում հարկավոր և փոքր առ փոքր թեմաները դարձնել բարդ:

Կոմիտեները և միջազգային դրուժյունը ուսումնասիրելու ժամանակ անհրաժեշտ և խմբակի անդամներին սովորեցնել դոնե համառոտ կերպով ծանոթանալ իր շրջապատին՝ քարտեզի վրա: Խմբակը պետք և սովորեցնի կոմյունիստականներին լրագիր կարդալ, այդպես ուսումնասիրելով միջազգային դրուժյունը, հարկավոր և հիմնվել լրագրական հեռագրերի վերլուծության վրա, պարզաբանելով լրագրի կազմությունը, ինչպես և ինչ բան կարդալ նրանից, ինչ լրագրեր կարդալ:

ԵՔՍԿՈՒՐՍԻԱՆԵՐԸ խմբակների աշխատանքի կարևոր մեթոդներից մեկն են (կուսակց. պատմության թանգարանը, դյուղը և այլն):

Մեծ նշանակություն ունի նույնպես Միության անդամներին մոտիկ ու ծանոթ տեղական նյութերը իբրև փաստ ցուցադրելը:

ԿՈՄՑԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԽՄԲԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Առաջին խմբակի նպատակն և ոգնել կոմյունիստականին դիտակցորեն մասնակցելու Միության աշխատանքին: Այդ խմբակի մեջ պետք և քաշել նորեկներին և այն անդամներին, վորոնք կանգնած են նորեկներին հավասար մակարդակի վրա: Իր ծրագրով նա պետք և ծանոթացնի իր անդամներին կոմյունիստականի պարտականություններին, յերիտասարդական շարժման հիմնական հարցերին: Դրա հետ միասին նա հասկացողություն և տալիս կուսակցության և կոմիտեների մասին, ծանոթացնում և արհմիության հիմնական սխտեմին: Վերջացնելով այն կոմյունիստականը կարողանում և գիտակցորեն կատարել իրեն հանձնարարված աշխատանքը, հետևում և լրագրերի հիման վրա կուսակցության և խորհրդային իշխանության աշխատանքին ու կյանքին, և այլն:

Այդպիսով կոմյունիստական խմբակը լենինյան դաստիարակության առաջին աստիճանն և Միության մեջ, նորեկին նա պատրաստում և Միության անդամ լինելու և նրան հնարավորություն և տալիս ճանաչելու իրեն շրջապատող իրականությունը, հասկանալու ժամանակակից հարցերը: Կոմյունիստական խմբակը միևնույն ժամանակ քաղխմբակի պատրաստականն և:

ԽՄԲԱԿԻ ԿԱԶՄԸ

1) Խմբակը ծառայում և Միության այն անդամներին, վորոնք գիտելիքներից դուրկ են, մասնակցից չեն արված ակտիվ աշխատանքի, և նորեկ կոմյունիստական անդամներին: Կոմյունիստական խմբակն անցնելը պարտադիր և:

Փաճորություն. — Կոմյունիստականները, ֆաբրիկագործարանային դպրոցների աշակերտները, բարձրագույն դպրոցների ուսանողները կոմյունիստական խմբակները չեն անցնում:

2) Կոմյունիստական ամիս մի խմբակ ընդունվում և վոչ ալիլի քան 25-30 հոգի:

3) Անգրագետներին կոմյունիստական խմբակը չի ընդունում:

4) Կոմյունիստական խմբակում պարապելը համարվում և իբրև Միության հիմնական պարտականություններից մեկը:

5) Խմբակ ընդունել կարելի և յեղակի անկուսակցական վորերերին և:

ԽՄԲԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1) Խմբակը ստեղծվում և ՌԼԿՑՆՄ արտադրողական բջիջին կից, գավառական քաղաքներում՝ հիմնարկությունների բջիջներին կից:

2) Խմբակի պարապմունքների տեղը գործարանային բջիջն և կամ կոմյունիստական ընհանուր ակումբը:

3) Խմբակների աշխատանքների տևողությունը 3 ու կես ամիս և. ըստ ծրագրի՝ 13 զրույց, մեկը նախապատրաստական և մեկ-յերկուսն և յեղրափակում: Խմբակի պարապմունքները տեղի յեն ունենում շաբաթական մի անգամ: Բացառություններ կարող են լինել, յեթե քաղաքագրագիտության կրկնություններ անհրաժեշտ են դարձնում պարապմունքների ավելացումը:

Շրջկոմիտեի և գավկոմիտեի ագիտպրոպ Բաժինները խմբակների ամուր ցանց են հաստատում, կազմելով կազմակերպչական ճիշտ ծրագիր, համաձայն ուժերի իրական հաշվառման:

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր Ը

1) Յուրաքանչյուր խմբակի գլխին կանգնած է ղեկավարը՝ կոմյերիտական աշխատակիցը կամ կուսակցական պրոպագանդիստը, բայց անպայման կուսակցության անդամը կամ թեկնածուն։ Բացառություն թույլատրվում է այն դեպքում միայն, յեթե կուսակցական ղեկավար չի գտնվում։

2) Խմբակի ղեկավարը ամսեամիս հաշիվ է տալիս գործարանային ագիտպրոպաների առաջ, ներկայացնելով գրավոր համառոտ ամփոփումներ և հաշվետվություն։

3) Ղեկավարը հաստատվում է համապատասխան խմբակի վրա։ Ղեկավարների տեղափոխությունն աշխատանքների ընթացքում անթույլատրելի չէ։

4) Ցանկալի չէ, վոր ղեկավարները փոփոխություններ մտցնեն ծրագրի կառուցվածքի մեջ՝ իրագործման ժամանակ։

Ագիտպրոպաների վարիչների վրա պարտ է ծանրանում՝ հետևել միասնական ծրագրի իրագործմանը։

5) Ղեկավարը պետք է պարապմունքներից առաջ բազմակողմանի կերպով ծանոթանա այն ձեռնարկության հետ, վորի համար աշխատում են խմբակի անդամները։ Աշխատանքների ընթացքում նա պետք է ծանոթանա պայմաններին և նրանց համապատասխան դասավորի իր նյութը, քաղելով որինակները ձեռնարկության կյանքից՝ յեղրակացությունների անելու համար։

6) Խմբակի ղեկավարը շարունակ մասնակցում է ԼԿՅԵՄ բջիջի աշխատանքներին, վորպեսզի լավատեղյակ լինի կոմյերիտականներին հետաքրքրող բոլոր հարցերին։

7) Ղեկավարն անպայման պիտի լինի անդամ պրոպագանդիստների սեմինարիայի։

8) Իր աշխատանքի վորակի հաշվառման համար ղեկավարը անպատճառ պահում է իր աշխատանքի սրագիրը, վորի մեջ՝

ա) նշանակում է իր ունկնդիրներին տված բոլոր աշխատանքները և ընդհանուր գնահատականն է տալիս կատարած աշխատանքների համար։

բ) նշանակում է մեթոդական բնույթ ունեցող բոլոր ծագած հարցերն ու դժվարությունները և տալիս է արած նվաճումների ընդհանուր ամփոփումը։

գ) Շոշափում է բջիջի, Գործարանային կոմիտեյի և այլ

կազմակերպությունների հետ ունեցած փոխ-հարաբերությունների վերաբերյալ հարցերը, ինչպես նաև խմբակի նյութեղենով կահավորելու վերաբերյալ ներքին կազմակերպության հարցերը։

դ) Պահում է քաղխմբակի անդամների աշխատանքների վորակի հաշվառումը, թողնելով ունկնդիրների անհատական բնութագծերը։

9) Ղեկավարը պատասխանատու չէ խմբակի համար։

ԽՄԲԱԿԻ ԿՈՒԼԵԿՏԻՎԸ

1) Քաղխմբակի կուլեկտիվի կազմի մեջ մտնում են խմբակի անդամները, բջիջի ագիտ-պրոպ մասի վարիչը։

2) Խմբակի կուլեկտիվը, առնվազն, գումարվում է յերեք անգամ ամբողջ ուսումնական շրջանում։

3) Կուլեկտիվը իր առաջին կազմակերպական ժողովում պարապմունքներն սկսելուց առաջ քննում է առաջիկա աշխատանքների ծրագիրն ու մեթոդները և վերլուծում կազմակերպչական հարցերը (պարապմունքների ժամանակը, ավագների ընտրությունը)։

4) Պարապմունքների կիսաշրջանում (մոտավորապես, ծրագրի կեսն անցնելուց հետո) տեղի չէ ունենում կուլեկտիվի հաշվական ժողովը, վորտեղ լսում ու քննում են վարիչի և սովորողների ղեկուցումները կատարված աշխատանքների մասին, նմանապես նկատի չեն առնվում քաղխմբակի յերկրորդ կիսաշրջանի պարապմունքներն ավարտելու հեռանկարները։

5) Ուսումնական շրջանի վերջում կուլեկտիվն ամփոփում է՝ ինչպես ամբողջ խմբակի, այնպես և յուրաքանչյուր սովորողի կատարած աշխատանքները (սովորողների բնութագծերը), գնահատական տալով ղեկավարի աշխատանքին։

6) Կուլեկտիվի ժողովում կազմվում է մանրամասն արձանագրություն և ղեկավարի միջոցով ուղարկվում շրջկոմի կամ գավկոմի ագիտ-պրոպ բաժնի վարիչին։

ԱՎԱԳԸ՝ ԽՄԲԱԿԻ ԲԱՐՏՈՒՂԱՐՆ Ե ՅԵՎ ՆՐԱ ՈԳՆԱԿԱՆԸ

1) Ավագը հատուկ որագիր-տետրում նշանակում է հաճախողների անունները։

2) Ավագը կազմում է և պահում խմբակի կուլեկտիվի ժողովների ու պարապմունքների արձանագրությունները, հաճա-

խողները ցուցակը, ինչպես նաև ունկնդիրների աշխատանքները:

3) Պահում և շարժական կարգով ստացված դասակարգ ձեռնարկների հաշիվը և կազմակերպում նրանց բաշխումը:

4) Քարտուղար-ավագի և նրա ոգնականի աշխատանքը կոմյերիտական պարտականությունն է:

5) Ավագը ընտրվում և խմբակի ժողովում խմբակի պարամունքների ամբողջ տեվողության շրջանի համար:

6) Ավագը սխտեմատիկ կերպով գրում և պատի լրագրին խմբակի աշխատանքների մասին:

ԽՄԲԱԿԻ ԱՆԴԱՄԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1) Խմբակի ամեն մի անդամ պետք է իր առաջնակարգ պարտականությունը համարի խմբակն անցնելը և հաջողությամբ ավարտելը:

2) Նա պարտավոր է կանոնավորապես հաճախել պարամունքներին և ճշտորեն կատարել ղեկավարի տված աշխատանքներն ու ցուցմունքները:

Առանց հարգելի պատճառների պարամունքներից բացակայելը կարգապահության խախտումն է, վորի պատճառով նրանց վերաբերմամբ հարցը վճռում և բժիշի բյուրոն:

ԼԿՑԵՄ ԲԶԻՋԸ ՅԵՎ ԽՄԲԱԿԸ

1) Թեյել խմբակի աշխատանքների կազմակերպման և ընթացքի վերաբերյալ պատասխանատվությունն ընկնում է նրա ղեկավարի վրա, սակայն վոչ պակաս պատասխանատվությունն է կրում խմբակի համար նմանապես և այն բժիշը, վորին կից ստեղծված է խմբակը:

2) Այդ հիման վրա, բժիշը շարունակ պետք է լավատեղյակ լինի խմբակի աշխատանքներին, հաստատելով նրա ծրագիրը, վերահսկելով նրան, վիրացնելով այն բոլոր տեխնիքական կազմակերպչական դժվարությունները, վորոնք կանգնում են խմբակի առջև, լսելով իր ժողովներում ղեկավարի զեկուցումները խմբակի մասին, նմանապես ունկնդիրների տված տեղեկությունները:

3) Խմբակը շարունակ լուսաբանում է իր կատարած աշխատանքը պատի և կոմյերիտական ընդհանուր լրագրում:

ՀՀ Ազգային գրադարան



NL0187322

